ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 118

ք. Երևան 24.05.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 09104565, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. շ/21/59/բն. միջև 14.08.2023թ. կնքված N ՀՄԱՄՇՁԲ-23-10/25-1 գնման պայմանագրի և պայմանագրին կից 29.03.2024թ. կնքված N 1 փոփոխության (Այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր մինչև 2023թ.-ի նոյեմբերի 30-ը կատարել 487,302,134 (չորս հարյուր ութսունյոթ միլիոն երեք հարյուր երկու հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ, սակայն «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերության կողմից կատարվել է ընդամենը 374,819,734 (երեք հարյուր յոթանասունչորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար յոթ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, այսինքն 112,482,400 (հարյուր տասներկու միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հաշվի առնելով, որ «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ